ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"25" 02 2013թ № 16 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20- Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1) ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով և համաձայն <<Իշխանասարի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 16.01.2013թ. N 1 գրավոր առաջարկության որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին N 241-Ա որոշման N 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետում <<Աբգարյան Գայանե>> բառերը փոխարինել <<Հարությունյան Մարինե>> բառերով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. փետրվարի 25
ք. Կապան